ԳԷՈՐԳ Զ. ՉՈՐԷՔՉԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՔԱՐՈԶՆԵՐԸ

Յայտնի է, որ երջանկայիշատակ Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպէս կանոն, իր ելոյթներն ու քարոզները նախապէս գրի էր առնում եւ, եթէ պահը յարմար էր՝ կարդում էր: Անշուշտ լինում էին նաեւ դէպքեր, երբ պատրաստած քարոզը չէր խօսում. այդ մասին նա յետոյ արձանագրում էր՝ «Չէ խօսուած»:

Մայր Աթոռի Հրատարակչական բաժինը պատրաստում է պատրաստում այդ անտիպ քարոզները, որոնց բնագրերը պահպանում են ՀՀ Ազգային արխիւում (1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 23, թ. 6-10, ձեռագիր, բնագիր 2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 54, թ. 7-12, ձեռագիր, բնագիր 3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 61, թ. 1-7, ձեռագիր, բնագիր 4. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 80, թ. 1-9, ձեռագիր, բնագիր): Ստորեւ ներկայացնում ենք այդ քարոզներից մի քանիսը:

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՅԻԼԵԱՆ

1

«ԴՈՒ ԵՍ ՔՐԻՍՏՈՍՆ՝ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՆԴԱՆԻՈՅ»
(Մատթ. ԺԶ 13-19)

Ալեկոծ կեանքի առաջ ենք կանգնած, յեղյեղուկ ժամանակներ ենք ապրում, երբ բազմատեսակ նոր աշխարհայեացքներ ու վարդապետութիւններ մրցում են միմեանց հետ առաջնութեան համար՝ կռուելով նաեւ նախկինների հետ: Այդպիսի շրջանում Եկեղեցին իրաւունք չունի լուռ եւ անտարբեր հանդիսատես լինելու. նա պարտական է վերաբերմունք ցոյց տալ, նա պարտական է իր դաւանանքը, իր աշխարհայեացքը վերագնահատութեան ենթարկել՝ անփոփոխ պահել իր ունեցածը, փոփոխութեան ենթարկել եւ կամ հրաժարուել ու վրան խաչ դնել:

Բայց նախ լսենք, թէ ո՛րն է Եկեղեցու դաւանանքը: Յիսուս, զգալով, որ ժամանակը մօտենում է աշխարհին հրաժեշտ տալու, կամեցաւ իմանալ Իր գործունէութեան արդիւնքը. կամեցաւ իմանալ, թէ արդեօք կարողացե՞լ է պատրաստել եւ ունի՞ Իր գաղափարներին հաւատարիմ ժողովուրդ, արդեօք Իր աշակերտները ըմբռնե՞լ են Իրեն եւ պատրա՞ստ են հաւատարիմ մնալու իրենց դաւանանքին, եթէ մրրկաբեր սեւ ամպեր կախուեն նոցա գլխին, թէ՞ որոտի եւ կայծակի ահաբեկման ներքոյ փախուստ կուտան, գլուխ կը պահեն եւ փոքրոգութեամբ կը դաւաճանեն իրենց գաղափարին՝ Փրկչի Աւետարանին:

Ահա խոհեր, որոնք զբաղեցնում էին Փրկչին, խորապէս ալեկոծում

Նրա ներքին աշխարհը, քանի որ հարցի դրական լուծումը հաւասարազօր էր Նրա գաղափարների յաղթանակին, Նրա ձեռնարկութեան յաջող ելքին, նրա հոգեւոր կեանքին, իսկ բացասականը՝ Նրա ձեռնարկի անյաջողութեան, նրա հոգեւոր մահուան: Ահա թէ ինչո՛ւ մեծ հետաքրքրութեամբ հարցրեց թէ՝ մարդիկ Իմ մասին ի՞նչ կարծիք ունին, ո՞վ եմ Ես:

Ինչ տարօրինակ կարծիքներ էին կազմուած ժողովրդի մէջ. ոմանք համարում էին, թէ Եղիայի եւ Երեմիայի հոգին է երեւացել երկրի վերայ ի դէմս Յիսուսի, ուրիշները Յովհաննէս Մկրտչին էին յարութիւն տուել եւ իրենց առաջ գլխատուած միայնակեացին, անապատի խրոխտ ու կծու քարոզչին նոյնացրել խնդերես, կենսուրախ եւ հեզահամբոյր, մարմնով կենդանի Յիսուսի հետ:

Իսկ դո՞ւք ինչ էք կարծում, ո՞վ եմ Ես: Փրկչի համար չափազանց հետաքրքրական էր իմանալ, թէ արդեօք աշակերտները կ՚ունենա՞ն արիութիւն իրենց ներքին խոստովանութիւնը հրապարակով Փրկչի երեսին ասելու, մանաւանդ այժմ, երբ Նրա յաջողութեան ու բախտի աստղը թեքուել էր, երբ այլեւս այն ոգեւորուած ամբոխը չկար, որ պատրաստ էր Նրան իր կեանքի գնով պաշտպանելու, որ օրուգիշեր վազում էր Նրա ետեւից քաղցած-ծարաւ՝ հոգեւոր սնունդը գերադասելով մարմնաւորին: Այլ նոցա առաջ կանգնած էր այժմ մի պարզ մարդ՝ փառքից ու շուքից հեռու, որ առաջ Իր փայլով ու շուքով նայողին շլացնում էր ու կուրացնում:

Այս վիճակի մէջ հասկանալի է Յիսուսի սրտի յուզումնալից բերկրութիւնը՝ լսելով Պետրոսի՝ ոգեւորութեամբ լի խոստովանութիւնը՝ «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ»: Այդ պատասխանը անչափ ուրախացրեց Յիսուսին, որով արտայայտուած էր Իր ժողովրդի գերագոյն յոյսի իրականացումը: Բայց Նրա ուրախութիւնը կատարեալ չէր, Նրա ուրախութեան մէջ կար նաեւ Նրա հոգին ճնշող մի վիշտ: Այո՛, Յիսուս գովում է Պետրոսի գեղեցիկ խոստովանութիւնը, նմանեցնում է նրա հաւատը վէմի, որի վերայ պիտի հաստատուի Իր նոր համայնքը՝ Իր նոր Եկեղեցին, սակայն զգում է նաեւ, որ ժամանակը եկել է իւրայիններից բաժանուելու, հասել է խաւարի ոյժերի յաղթութեան ժամը եւ որ Ինքը չար հոգիների զոհ պիտի լինի: Ուստի եւ կարեւոր է համարում աշակերտների առաջ պարզել ամէն ինչ, ապագայի մթութեան շղարշը բանալ, որպէսզի նոքա սովորեն, թէ ինչու է Յիսուս Բարձրելոյ Որդի եւ Աստուծոյ Օծեալ կոչւում, եւ որն է ճամբան Փրկչի հարազատ աշակերտի եւ ճշմարիտ քրիստոնէի:

Նրա ճամբան չի ընթանում դէպի վեր՝ դէպի փառք ու պատիւ, այլ դէպի վար՝ դէպի վիշտ ու մահ: Երուսաղէմը, որ Իր աշակերտների ջերմ ցանկութիւնների եւ վառ յոյսերի վախճանական նպատակն էր, Դաւթի քաղաքը, որ Դաւթի Որդուն դէպի փառք ու յաղթանակ պիտի առաջ-

նորդէր, նոյն այդ Երուսաղէմը նախ պիտի լինէր Նրա անարգանաց ու մահուան վայրը, ինչպէս եղել էր մարգարէների նկատմամբ:

Աշակերտների առաջ փառքի հեռանկարի փոխարէն տնկում է Յիսուս տանջանքի խաչը: Ի՜նչ սարսափելի փորձութիւն է աշակերտների համար. նա, որ բերան էր եղել բոլորի հաւատի, նա՛ պիտի լինէր նաեւ նոցա երկչոտութեան վկան: Եւ ահա նա՝ Պետրոսը, մեր առաջն է. ի՜նչպէս երկչոտ նայում է Յիսուսի աչքերին, ի՜նչպէս անձնապաշտպանութեամբ խուսափում է Փրկչի խօսքերից՝ ասելով. «Տէ՛ր, մի՛ եղիցի քեզ այդ»: Նա, որ Վարդապետի մեծ գովքին արժանացաւ, լսեց նաեւ Նրա կծու յանդիմանութիւնը. «Ե՛րթ յետս Իմ, սատանայ, գայթակղութիւն Իմ ես...» (Մատթ. ԺԶ 23):

Մի՞թէ Տէրը մարմին եւ արիւն չունի մեզ նման. մի՞թէ Նա չի կարօտում սիրոյ հովանի ձեռքի եւ զգուշացուցիչ խօսքի՝ հանդէպ գալիք ահարկու վիճակի: Այո՛, մենք հասկանում ենք Քեզ, Որդի՛ Մարդոյ. Դու կամենում ես մինչեւ վերջը հաւատարիմ մնալ Քո Առաքչին՝ Քո Հօրը. Դու կամենում ես անձնական երջանկութիւնդ ու կեանքդ զոհ բերել մեծ եւ սուրբ գործի. Դու չես կամենում խոնարհել աշխարհի ոյժերի՝ վշտերի ու ահաբեկութեանց առաջ. Դու պատրաստ ես հաստատուն մնալ կռուի եւ փոթորկի ժամանակ մինչեւ արեանդ վերջին կաթիլը եւ չդաւաճանել Քո Հօրը՝ ճշմարտութեան, սիրոյ եւ կեանքի Աստծուն:

Ահա՛ միակ ուղին Աստուծոյ օծեալ եւ Բարձրելոյ որդի լինելու, միակ ճանապարհը ճշմարիտ քրիստոնեայ դառնալու: Տիրոջ բռնած ճամբա՛ն՝ խաչի ճամբա՛ն է փառքի ճամբան, եւ կամ մենք ճշմարիտ ըմբռնումն չունինք Նրա մէջ թագաւորող Ոգու մասին, որքան էլ մենք պարծենանք իբրեւ քրիստոնեայ:

Մի բան պարզենք մեզ, որ պարզեց Յիսուս Իր աշակերտներին՝ նոցա փորձութեան բովի առաջ կանգնեցնելով, որպէսզի համոզուենք, թէ ճանաչում ենք Տիրոջը: Արդեօք պատրա՞ստ ենք Նրա ճամբով ընթանալու եւ այդ ճամբան մեր փառքի ու երջանկութեան ճամբայ ճանաչելու. արդեօք դաւանո՞ւմ ենք Փրկչի խօսքի ճշմարտութիւնը թէ՝ «Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր վասն Իմ, գտցէ զնա» (Մատթ. ԺԶ 25): Հարստութիւնը չէ մեծ, փառքն ու պատիւը չեն մեծ, դիրքն ու կոչումը չէ մեծ, փարթամ կեանքը չէ մեծ, այլ մեծ է գաղափարի հաւատարմութիւնը եւ անձնուիրութիւնը:

Փա՛ռք Աստուծոյ, որ այս ճշմարտութիւնը ոչ միայն տիեզերական պատմական բեմի վերայ է հաստատուած, այլ առաւելապէս առօրեայ կեանքի մէջ՝ աշխատանոցներում, գործարաններում, հիւանդանոցներում, սոսկական տներում եւ այլն: Նոքա են, որ աշխարհը բարոյական անկումից պահում են: Սակայն դժբախտաբար ներկայ նիւթապաշտ ժամանակը գիտնալ չ՝ուզէ այդ մեծ ճշմարտութիւնը. արծաթն ու ոսկին,

փայլն ու փառքը, ոյժն ու իշխանութիւնն է այսօր, առաւել քան այլ ժամանակ, իշխել մարդու հոգուն: Ուստի եւ այսօր, առաւել քան այլ ժամանակ, կարօտում ենք Փրկչի խօսքի մեծ ճշմարտութիւնը մեր անձնական կեանքի վերայ փորձելու. «Զի որ կամիցի...»:

Մեծ խնդիրներ են դրուած ներկայումս մեր առաջ. հաճոյք պիտի համարենք ապրել այսօր մենք բոլորս, որոնք գծուած անձնական շահից դուրս այլ սրբութիւն դաւանում են: Կռիւ պիտի մղենք օրէցօր աճող հազարաւոր կարիքների, ներքին եւ արտաքին թշուառութիւնների դէմ. մաքառենք մեր ազգի բարձրագոյն բարիքների, բախտի ու բարեկեցութեան համար: Տեսնո՞ւմ էք, թէ ինչ մեծ աշխատանք կայ: Ով տեսնում է այս բոլորը, համարձակ սիրտ ունի եւ աշխատող ձեռք, պէտք է գործի կանգնի: Արտաքին ոյժով, ստիպողական օրէնքներով եւ բռնի միջոցներով չէ՛, որ այս մաքառումն ու կռիւը յաղթական վախճան պիտի ունենայ, այլ միայն Տիրոջ ոգով, անձնուէր սիրոյ ոգով:

Եկէ՛ք դուք, ա՛ռք եւ կանայք, որ սիրտ ունիք մեր ժողովրդի համար, որ պատրաստ էք ձեր ժամանակը, ձեր ոյժը, ձեր յարմարութիւնները, ձեր դրամը եւ, եթէ կարիք լինի, նաեւ աւելին զոհելու յանուն մեծ գործի, որ դրել է մեր առաջ ներկայ ժամանակը: Ով կարող է խաչի ճամբով ընթանալ, տանջանքի ու նեղութեան տոկալ, անձնուիրութիւն ընտրել եւ սոցա մէջ տեսնել կեանքի արժէքն ու նշանակութիւնը, իր հոգու խաղաղութիւնն ու երջանկութիւնը, նա՛ է միայն Քրիստոսի աշակերտ, նա՛ է միայն Յիսուսի ճշմարիտ հաւատացողը եւ Փրկչին Օծեալ Տեառն եւ Որդի Բարձրելոյ դաւանողը:

***

«Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ»: Պետրոսի հաւատոյ այս խոստովանութիւնը ինչպէ՛ս պարզ, խիզախ եւ յաղթական է հնչում ներկայ մարդկային խառնաշփոթ դաւանանքների մէջ եւ ամօթահար անում ամէն սնոտի հաւատ, թերահաւատութիւն եւ անհաւատութիւն: Այս է եղել դաւանանքը Քրիստոնէական Եկեղեցու, որ եւ Հայ Եկեղեցին գրել է իր դրօշակի վերայ, որ ցարդ բարձր է բռնել վէճերի, տարաձայնութիւնների եւ կուսակցական պայքարի ժամանակ եւ որ իբրեւ լուսատու փարոս դէպի ինքն է շրջել հաւատացելոց հայեացքը:

Այն ժամանակ, երբ Քրիստոնէական Եկեղեցու մէջ հազարաւորները Քրիստոսին ճանչնալ չուզեն եւ Նրա փոխարէն մարդկային անուններ են դրել իրենց դրօշակի վերայ, Հայ Եկեղեցին ամուր պահել է իր հին դրօշակը, որի վերայ անջնջելի, անեղծանելի տառերով գրուած է. «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ», Դո՛ւ միայն ես մարդու իմաստութեան, արդարութեան եւ փրկութեան աղբիւրը:

Նա՛ է, որի խօսքը անձուկ է հանդէպ մարդկային նորաստեղծ լոզունգների: Նա՛ է, որ մարդկային յուզուած հոգիներին ընդունակ է

խաղաղութիւն տալու: Նա՛ է նաեւ մարդկային մարմնին երջանկութիւն պարգեւողը: Նա՛ է, որ մագնիսի պէս դէպի Ինքն է ձգում բոլոր ազնիւ հոգիները: Նա՛ է մխիթարիչը այն բոլոր սրտերի, որոնք մարդկային խղճի ստրկութիւնից ու արտաքին ծիսական աստուածպաշտութեան սին մխիթարութիւնից յոգնած, փրկութեան ծարաւով լցուած՝ Իւր շուրջն են հաւաքուած:

Եթէ այսօր էլ Տէրը հարցնէ, թէ մարդիկ ի՛նչ են կարծում, ո՛վ է Յիսուս, այսօր էլ մարդկային պատասխանները անցեալի նման բազմապիսի եւ բազմերանգ կը լինին: Ոմանք կը համարեն Նրան մի մարգարէ, մի Յովհաննէս Մկրտիչ՝ ապաշխարութեան քարոզիչ, այլք՝ մի լուսաւոր միտք եւ կրակոտ հոգի՝ հիացման արժանի, այլոց համար Նա կը լինի առասպելական անձն, իսկ քրիստոնեայ աշխարհի մեծամասնութիւնը պատասխան չունի, որովհետեւ երբեք այդ մասին չի խորհել, ուստի եւ համոզմունք չի կազմել:

Ո՜հ, որպիսի՜ արժանապատուութեամբ կանգնած են մեր առաջ մեր բարեպաշտ նախորդները իրենց մանկական՝ պարզ ու միամիտ, եւ առնական՝ զօրեղ հաւատով: Ինչպէ՜ս խիզախ ու համարձակ դաւանում է Պետրոսը. «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ», կամ ինչպէ՜ս ուրախ ու ժպտերես վկայում է Պօղոսը, թէ Յիսուս աշխարհ է եկել մարդկանց փրկութեան համար, եւ նոցա հետ ինչպէ՜ս ներդաշնակ հնչում է Հայ Եկեղեցու դաւանանքը, թէ Յիսուս ճշմարիտ Աստուած է եւ ճշմարիտ Մարդ, որ Իւր անձը զոհել է մարդու փրկութեան համար:

Հաւատո՞ւմ ես սրան, իմ սիրելի հա՛յ ժողովուրդ: Եթէ հաւատում ես, մի՛ նայիր վար, մեր բարեպաշտ պապերի դաւանանքը մարած վարդապետութիւն չէ՛, այլ վե՛ր նայիր, բարձր բռնած դրօշակի վերա՛յ ուղղիր հայեացքդ, որի տակ այսօր էլ բոլոր ճշմարիտ հաւատացեալները ի մի են ժողովուել՝ խոյս տալով տարակարծիք վէճերից ու կուսակցական պայքարից: Ուրիշ դրօշակ չե՛մ ճանաչում ես, քան թէ այն դրօշակը, որի վերայ գրուած է Քրիստոսի անունն ու Նրա խօսքը: Այդ դրօշակն է միայն ընդունակ մարդկային մոլար վէճերի ու անիմաստ պայքարի ժամանակ մարդու երերուն հոգուն խաղաղութիւն պարգեւելու:

Բարձր ու հաստատո՛ւն պահիր այդ դրօշակը, Հա՛յ Եկեղեցի: Ով նրա տակը կը կանգնէ եւ նրան կ՚երդուի, մեր եղբայրը կը լինի: Նա՛ է, որ քեզ ժամանակի ամենատեսակ յեղյեղուկ օրօրումներից ու տարաշունչ քամիներից զերծ կը պահէ եւ մարդու միտքն ու սիրտը գերող կապանքներից, աշխարհիկ թէ եկեղեցական փարիսեցիական կանոններից կ՚ազատէ: Խնդրի՛ր Աստծուն, որ մարդու փոխարէն՝ Յիսուսի՛ հաւատը զօրացնէ մէջդ, Նրա պայծառ դէմքը լուսաւորուի սրտումդ եւ Նրա խօսքը ուղեկցէ կեանքիդ, որ բարութեան ու ճշմարտութեան ուղիով ընթանաս, երջանիկ լինիս եւ եղբայրներիդ երջանկացնես:

Պետրոսի հաւատը սիրեց Յիսուս եւ այդ հաւատի վերայ հիմնեց Իր Եկեղեցին. «Եւ Ես քեզ ասեմ, Պետրէ. դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի Իմ» (Մատթ. ԺԶ 18):

Սակայն ո՞վ է այդ վէմը՝ Պետրոսը, որին այդ մեծ խոստումը տրուեցաւ. ո՞վ է այդ վէմը, որին դժոխքի դռներն անգամ յաղթահարել չպիտի կարողանան: Արդեօ՞ք նոյն Սիմովն Պետրոսը՝ Յովնանի որդին, որ մարդկային մարմին եւ արիւն ունի, որին Յիսուս երբեմն պատժելով յանդիմանեց՝ «Ե՛րթ յետս իմ, սատանայ, գայթակղութիւն Իմ ես, զի ո՛չ խորհիս զԱստուծոյսն, այլ զմարդոյն» ասելով, եւ որ Տիրոջ չարչարանաց գիշերը իր ուրացութեամբ մի անգամ էլ իւր մարմնոյ եւ արեան թուլութեան վկայութիւնը տուաւ: Մի՞թէ սա միեւնոյն Պետրոսն է՝ մեր փրկութեան վէմը, որ Ս. Հոգով լցուած՝ վկայեց, թէ միայն ու միայն Յիսուսի հաւատով է մեր փրկութիւնը: Այո՛, եղբայրնե՛ր եւ քոյրեր, միակ փրկութեան աղբիւրը Աստուծոյ խօսքն է, որ անանցանելի է եւ յաւիտեան կը մնայ, եթէ մինչեւ իսկ երկինքն ու երկիրը անցնեն: Իսկական Պետրոսը, իսկական վէմը այն կենդանի հաւատն է, որ Տէրը երբեմն Յովնանի որդու՝ Սիմոն Պետրոսի մէջ տեսաւ ու գովեց: Նոյն այդ հաւա՛տն է, որին դժոխքի դռներն անգամ չպիտի կարողանան յաղթահարել:

Այո՛, քանի դու, Հայ Եկեղեցի եւ հա՛յ ժողովուրդ, այդ ապառաժ հաւատի վերայ ես կանգնած, դժոխքի դռները քե՛զ էլ ահարկու չեն, մինչեւ իսկ եթէ ստի երկրային բոլոր հրեշտակները քո դէմ զինուեն: Քանի դու հաւատոյ վէմի վերայ ես յենուած, թո՛ղ անհաւատութիւնը քո դէմ փոթորկի եւ թերահաւատութիւնը սարեր կանգնէ շուրջդ, Աստուծոյ խօսքը կը մնայ, ու մարդկայինը կ՚անցնի կ՚երթայ, ինչպէս հաստատում է այդ 2000 տարուայ պատմութեան փորձը:

Եթէ դուք էլ, հայ եղբայրնե՛ր եւ քոյրեր, այդ հաւատը պինդ պահէք, Փրկչին գրկէք, Նրա խօսքով ապրէք, դուք էլ Պետրոս կը լինիք, հաւատոյ վէմ քար ու ծովի մէջ ցցուած ապառաժի նման անվրդով կը մնաք կատաղի ալիքների հարուածների հանդէպ: Դուք էլ հաստատուն կը մնաք դժբախտութեան փոթորիկների առաջ եւ անսասան՝ աշխարհի մաքառումների հանդէպ եւ կը կարողանաք Պօղոսի նման պարծենալ. «Եթէ Տէր ընդ իս է, ո՞վ կայ մեզ հակառակ» (Հռոմ. Ը 31):

Իսկ Դու, Տէ՛ր, օգնիր մեզ մեր հաւատը զօրացնելու, պարգեւիր մեզ վէմ-Պետրոսի կենդանի հաւատը, առաքիր Սուրբ Հոգիդ, որ մեր սրտերը յեղաշրջէ եւ վերածնէ եւ ամենուրեք կենդանի հաւատ յուզէ դէպի Քեզ եւ ջերմ սէր դէպի եղբայրները, եւ ուսուցանէ մեզ Հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագել: Եւ Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 23, թ. 6-10, ձեռագիր, բնագիր:

2
ՎՇՏԱԿԻՐ ՅԻՍՈՒՍ

«Եւ նոքա առեալ տանէին զ Նա.
Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն,
Եւ ելանէր ի տեղին, որ անուանեալ էր Գագաթան
Եւ կոչէր երբայեցերէն Գողգոթա»
(Յովհ. ԺԹ 17)

Պատահում է երբեմն, որ մարդկային կեանքի խորագոյն եւ լաւագոյն իմաստը յանկարծ պարզում է ու յայտնագործում մի պատահական դէպք, մի որեւէ գործ եւ կամ որեւէ ապրում: Սակայն այս երեւոյթը պատահում է ո՛չ սովորական, այլ արտակարգ անհատների հետ, որոնք ծնուել են որոշ կոչումով եւ օժտուած՝ բնատուր ձիրքերով:

Այսպիսի տաղանդաւոր եւ հանճարեղ անհատների կեանքը մի ուժգին մաքառումն է սկզբում անորոշ եւ աղօտ մի արժէքի՝ մի թանգագին մարգարտի համար, որ սակայն ապագայում հետզհետէ պարզւում եւ որոշւում է եւ կազմում նոցա կեանքի ու գոյութեան իմաստը:

Մեծ մարդոց զարթնումի այս ապրումները յաճախ պատմութեան մէջ դարաշրջաններ են կազմում: Թարմ ոյժի նոր հոսանք է սկսւում, մարդկային հոգիների մէջ թարմ գիտակցութիւն է ծնունդ առնում, եւ այդ թարմ ոյժն ու գիտակցութիւնը դառնում են գալիք սերնդի հոգեւոր սնունդն ու դաստիարակը:

Փրկչի կեանքի մէջ էլ կայ այդ մոմենտը, եւ այդ մոմենտը Նրա չարչարանքներն են: Այն օրն ու գիշերը, երբ Նա հոգով ու մարմնով մաքառում էր կորստաբեր ոյժերի դէմ, այդ այն մոմենտն էր, երբ Յիսուս Իր ամբողջ էութեամբ հաւաստիացաւ Իր ապրումների ճշմարտութեան մէջ, որ դարձաւ Նրա իդէալը եւ որով տիեզերական պատմութեան մէջ նոր էջ մուծեց:

Չարչարանաց պատմութեան մէջ էլ կարելի է մատնանշել մի պատկերի վերայ, որով Յիսուսի չարչարանաց իմաստը պարզ եւ զօրեղ է ընդգծուած. մի պատկեր, որ մեր մէջ անջնջելի է մնացել եւ կը մնայ, եւ որ Յովհաննէս աւետարանիչը երկու խօսքով է արտայայտել. «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»:

Մարդկութիւնը Յիսուսին անարգական մահուան դատապարտելուց յետոյ Նրան փառաց ի փառս բարձրացրեց, Նրան աստուածային յայտնութիւն համարեց, պատկերը սրբավայրերում կախեց, անունը հոգեւոր երգերով ու աղօթքներով փառաբանեց, դարեր շարունակ Նրա առաջ ծունր իջաւ եւ որպէս Աստուած պաշտեց: Սակայն այս բոլորը, որ մարդկութիւնը ստեղծեց Նրա անձի փառաբանութեան համար, անկարող եղաւ

ջնջել եւ ոչ իսկ նսեմացնել այն պարզ ճշմարտութիւնը, որ Նրա կեանքի անմիջական արձագանքն է եւ որ կազմում է Նրա կեանքի իմաստն ու բովանդակութիւնը. «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»:

Մարդիկ շատ բան են ուսել Փրկչից. Նրա հրապարակային գործունէութիւնը, որքան էլ կարճատեւ է, եւ որքան էլ սեղմ ու համառօտ նրա աւետարանական նկարագրութիւնը, սակայն եւ այնպէս պարունակում է խորը մտքեր եւ դաստիարակիչ պատկերներ: Բայց այդ պատկերներից եւ ոչ մէկը մարդու համար այնքան տպաւորիչ, այնքան նշանակալից եւ սիրտ յուզող ու մնայուն չէ, որքան այն պարզ պատկերը թէ՝ «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»: Այդ պարզ, բայց խորիմաստ խօսքերն ըմբռնել կարող ենք, երբ փորձենք մեր կեանքը վերլուծել եւ մեր կեանքով հասկանալ նաեւ Փրկչի կեանքի այդ մոմենտը: Խաչ, տանջանք՝ աղօտ ու մշուշապատ, բայց ծածանւում է ամէն գոյութեան եւ կեանքի վերայ՝ նորանոր ձեւերով ու պատկերներով: Ինչպէս ամպերը երկնքի երեսին միշտ փոփոխուելով կազմում են նոր ձեւեր ու կերպեր՝ մերթ լուսաւոր, մերթ գորշ ու մութ, եւ երբեք չեն անյայտանում, այլ ընդհատումներով միշտ բարձրանում են մեր տեսողութեան հորիզոնի սահմաններից եւ կանգնում մեր եւ բաց երկնքի մէջ, այսպէս էլ խաչն է միշտ ծածանւում մարդկային կեանքի վերայ միշտ նոր ձեւերով, միշտ նոր կերպերով: Քանի մարդ ներքնապէս ամփոփւում ու խորանում է, այնքան աւելի պարզ է տեսնում եւ ըմբռնում այս ճշմարտութիւնը:

Հազարաւոր տարիներ առաջ Գանգէս գետի ափին նստած էր մի հնդիկ ճգնաւոր, որ իր հոգու աչքերը յառած կեանքի թատերաբեմի վերայ՝ տարուած էր կեանքի իմաստը հասկանալու որոնումներով, երբ յանկարծ դուրս թռաւ նրա բերնից թէ՝ «Կեանքը տանջանք է»:

Արաբիայի անապատի մի բուսավայրում (օազիսում)՝ սեփական կալուածների աւերակների ու փլատակների առաջ, գլխին վայ տալով՝ նստած էր Յոբը՝ աշխարհի մեծ համբերատարը՝ հոգով ու մարմնով հիւանդ, աշխարհի ունայնութեան համոզումը դրոշմած իր սրտում. «Ո՞չ ապաքէն պատերազմ է կեանք մարդոյ ի վերայ երկրի եւ իբրեւ աւուրք վարձկանի աւուրք նորա...» (Հմմտ. Յովբ Է 1): Եւ այս տանջանքի մելամաղձոտ ձայնը հնչել է ամբողջ տիեզերական պատմութեան ընթացքում ամէն տեղ, մինչեւ մեր օրերը, երբ գերման խորիմաստ իմաստասէրներից մէկը (Շոպենհաուէր) նոյնն արտայայտում է կրակոտ ու զարհուրելի ձեւով. «Եթէ կեանքի էական ու անմիջական նպատակը տանջանքը չէ,- ասում է նա,- աշխարհի մէջ մեր գոյութիւնը անիմաստ է, որովհետեւ դժբախտութիւնը կեանքի օրէնք է»:

Այս խօսքերը չափազանցութիւն չեն, այլ կեանքից առած ճշմարտութիւն. ով թերահաւատում է, թող ստուգէ: Թող մտնէ, խնդրեմ, մի բանտ, հոգեկան հիւանդների մի տուն, ինչե՜ր ասէք չի տեսնի այնտեղ. կամ թէ

անցնի մեծ քաղաքի մարդաշատ փողոցներից մէկով եւ դիտէ անցորդների դէմքերի դառնութեան, չարութեան, վշտերի եւ հիւանդութեան դաժան արտայայտութիւնը. արդեօք կը կարողանա՞յ գոնէ մի ժամ տանել այդ դժոխային պատկերը:

Բարեպաշտ եղբայրնե՛ր եւ քոյրեր, խաչն ամենուրեք կայ. իւրաքանչիւր անհատ եւ ժողովուրդ իւրատեսակ խաչ ունի: Նա կայ դուրսը՝ մեր շուրջը, նա կայ ներսը՝ մեր մէջը. նա անբաժան անդամ է մեր ընտանիքի, ինչպէս եւ մեր սրտի. զուր է փորձել ազատուել նրանից. նա միշտ եղել է եւ կը լինի: Մարդկային կեանքի մէջ խաչը, որ վշտերի խորհրդանշան է, միշտ գոյութիւն է ունեցել. եւ այդ փաստն է, որ մարդոց մէջ երկիւղի զգացմունքն է զարթեցրել դերբնականի առաջ: Կրօնը սկզբնապէս երկիւղն է եղել այն էակի հանդէպ, որ կեանքի խաչն է ուղարկում մեզ: Կեանքի խաչն է, որ մարդոց կուրծքն է ճնշում եւ ամենայն երկիւղածութեամբ դէպի վեր, դէպի վերին գաղտնի ոյժերն է նայել տալիս, որոնք ղեկավարում են մեր ճամբան:

Այո՛, ճշմարիտ է, վշտով բռնուած կրծքեր միշտ պիտի լինին, կեանքի մէջ վիշտը պիտի շարունակէ իր գոյութիւնը, սակայն պէտք է, որ վշտերի ճնշող երկիւղը հեռանայ մեր կրծքից, վշտերի անէծքը վերանայ մեզնից: Եւ պատմութեան մէջ այս յեղաշրջման րոպէն, երբ վշտի անէծքն ու երկիւղը պիտի յաղթահարուի, այն րոպէն է, որ կոչւում է՝ «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»:

Յիսուս եկաւ եւ գտաւ Իր խաչը. Նա առաւ ուսին եւ ներքին խորին համոզմունքով ասաց. «Ով կամենում է գտնել իր կեանքը, նախ պիտի կորցնէ: Եւ ով իր խաչը չի առնի եւ չի հետեւի Ինձ, նա չի կարող Իմ աշակերտը լինել» (Մատթ. Ժ 38-39):

«Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն» նշանակում է՝ Յիսուս կեանքի աստուածային գաղտնիքը գտել է տանջանքի մէջ: Նա տեսնում է, որ երկրի վերայ տանջանքն ու սէրը միասին են ապրում, անբաժան: Զկայ սէր առանց տանջանքի. տանջանքի մէջ է սէրը զարթնում, աճում ու ծաւալում անհուն, ինչպէս անհուն է նաեւ վիշտը: Ի՞նչ է սէրը, եթէ ոչ տանջանքի վերայ տարած յաղթանակ. երբ թեթեւացնում ես մէկի վիշտը, մէկի տանջանքը, դու ոչ միայն քո սէրն ես արտայայտում դէպի նա, այլեւ նրա սիրոյ առարկան ես դառնում: Իսկ երբ ուրիշների տանջանքները թեթեւացնելու համար չես խնայում քո անձը, դու դառնում ես նոցա սիրոյ կուռքը, նոցա աստուածը:

Երբ մարդ չի անում այն, որ հաճելի է մարմնին, որ կամենում է մարմինը, այլ նետում է իրեն յաւիտենականի գիրկը, նա տանջանքի յաղթանակն է տօնում: Քրիստոս ունին հոգու այդ ներքին ոյժը, եւ այդ ներքին ոյժն էր, որ մղեց Յիսուսին խաչ կրել մարդոց առջեւից՝ ցոյց տալով նոցա, թէ ինչ է նշանակում կեանքը կորցնել՝ գտնելու նպատակով: Նրա ամբողջ

կեանքը սրա ապացոյցներով լի է. սակայն չարչարանաց շրջանում Նրա կեանքի բովանդակութիւնը կազմող այս կողմը իր գագաթնակէտին է հասնում: Երբ խաչակիր Յիսուսը գանահար եւ արիւնլուայ կանգնած է մեր առաջ, մենք տեսնում ենք մարմնով յաղթահարուած իրականութեան հետ՝ հոգով յաղթանակող իրականութիւնը. մենք տեսնում ենք ի դէմս Յիսուսի մի անմոռանալի պատկեր մարդկութեան համար՝ Իր անձի օրինակով ապացուցանող, թէ խաչը կրելով է, որ շահելու ենք մեր կեանքը:

Յիսուսի չարչարանքները սկիզբ են դնում մարդկային ամենատեսակ խաչի բժշկութեան, որով եւ՝ յաղթութեան: Պատկերացրէք, թէ որքա՜ն սրտեր վշտերի ժամերին հանգիստ ու խաղաղ են բաբախել՝ յիշելով Գողգոթայի համբերատարին: Քանի՜ տառապեալներ Յիսուսի անուամբ ու կեանքով մխիթարութիւն են գտել: Որքա՜ն վշտակիրների գաղտնի վշտակիցն ու ցաւակիցն է եղել Նա: Քանի՜ աչքեր գոցուել եւ շրթունքներ փակուել են Փրկչի անձի մխիթարանքով:

Այո՛, Փրկչի չարչարանքների վերյիշումը շատ է մխիթարական, բայց ո՛չ բաւարար. պէտք է անձա՛մբ կրել մեր խաչը: Մեր կեանքի դաւանանքը պէտք է լինի տանջանքի մէջ սէր որոնել. չէ՞ որ սիրել նշանակում է մոռանալ իր անձը. այսպէս եւ տանջուել՝ նշանակում է մոռանալ իր անձը: Անձի մոռացութիւնն է, որ դարձնում է մեզ ընդունակ ե՛ւ սիրելու, ե՛ւ տանջուելու:

Վշտերի դպրոցը դէպի Աստուած եւ դէպի մարդը սէր զարգացնելու մեծ դպրոցն է, ուստի եւ խաչակրութիւնը՝ ճշմարիտ քրիստոնէի բուն կոչումը: Կրկին յիշեցնում եմ գերման իմաստասէրի խօսքը. «Եթէ կեանքի էական եւ անմիջական նպատակը տանջանքը չէ, աշխարհի մէջ մեր գոյութիւնը անիմաստ է, որովհետեւ դժբախտութիւնը կեանքի օրէնքն է»: Նա իրաւունք ունէր այսպէս ասելու, եւ նրա խօսքը քրիստոնէի խօսք է, որովհետեւ յիրաւի մեր կեանքի առաջին ու անմիջական նպատակը տանջանքի մէջ պիտի որոնել, թէեւ նա մեր վերջին ու գերագոյն նպատակը չէ: Վախճանական նպատակը սէրն է, որ աստուածային ոյժի աճումն է, որի կատարեալ արժէքը ապագայի համար՝ մենք այժմ միայն նախազգում ենք. բայց այդ սէրը աճում է տանջանքի հողի վերայ: Սէրը տանջանքի հետ ձեռք ձեռքի տուած է ընթանում. նա է, որ իր ուսին է առնում եւ կրում՝ նմանելով Նախապատկերին, որ «բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»:

Քանի որ մարդիկ կ՚ապրեն երկրի վերայ, Փրկչի խաչը՝ խորը զգացող մարդու համար կը լինի փրկութեան մի հրաշալի ոյժ. բայց ո՛չ փրկութեան՝ Եկեղեցուն յատուկ դաւանանքների միջոցով, այլ փրկութեան, որ հետեւանք պիտի լինի մարդկային սրտի յեղաշրջման, պարզ մարդկային ճանապարհով, Մարդ Յիսուսի օրինակով, որի խաչը ուսուցանում է մեզ տանջանքի մէջ սէր գտնել. սէր, որ կեանք է մարդու համար: Եւ այսպէս

խաչեցեալ Յիսուսի պատկերը Գողգոթայի վերայ միշտ կը մնայ մարդկութեան իբրեւ ուղեցոյց:

Խաչակի՛ր հայ մարդ, եթէ դու այդքան տառապանքներից ազատուել ու ապրում ես ցայսօր, գիտցիր, որ պարտական ես հէնց քո այդ վշտերին: Դուն ապրել ես շնորհիւ Փրկչի խաչին, որ կրել ես ուսերիդ վերայ: Այսօր էլ խաչն է, որ ծանրացել է քո վերայ, հա՛յ ժողովուրդ, գրկիր եւ տա՛ր՝ համոզուած լինելով, որ նա կը բանայ քո առաջ սիրոյ դռներ, որ կը տանէ դէպի փրկութիւն եւ երջանկութիւն: Ամէն:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 54, թ. 7-12, ձեռագիր, բնագիր:

3

«ՈՒՐԱ՛Խ ԼԵՐ, ԲԵՐԿՐԵԱԼԴ, ՏԷՐ ԸՆԴ ՔԵԶ»
(Ղուկ. Ա 28)

Օրուայ աշխատանքից ու ընտանեկան հոգսերից մարմնով թալկացած՝ Ս. Կոյսը, իր աղքատիկ բնակարանի լռութեան մէջ, անձնատուր է լինում աղօթքի՝ կրօնական մենախօսութեան մէջ որոնելու հոգու հանգիստ եւ մխիթարութիւն: Նոր էր Կոյսը խորասուզուել Ս. Գրքի ընթերցման մէջ եւ կանգ առել Եսայի մարգարէի դժուարըմբռնելի խօսքերի առաջ թէ՝ «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ» (Ես. Է 14), երբ երեւեցաւ երկնակենցաղը եւ նորա մարդկային մտքին անհասանելի խորհրդածութիւնների ժամանակ՝ նորա երկնային վերացման բոպէին, նորա հոգու խաղաղութիւնը վրդովեց՝ հաղորդելով Աստուծոյ կամքը իր ընտրեալին՝ Ս. Կոյս Մարիամին՝ ասելով. «Ուրա՛խ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ»:

Այս երազ չէր, այլ իրականութիւն. նորա առաջ կանգնած էր լուսափայլ հրեշտակը պայծառ դէմքով, որ աւետում էր. «Մի՛ երկնչիր, Մարիա՛մ, զի գտեր շնորհս յԱստուծոյ: Եւ ահա յղասջիր եւ ծնցիս որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս» (Ղուկ. Ա 30-31):

Հրեշտակի բերած ողջոյնը սարսափ ազդեց Կոյսին, որովհետեւ չըմբռնեց ողջոյնի իմաստը եւ զարմացմամբ պատասխանեց. «Որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս»: Մենք եւս, սիրելիք, յաճախ սարսափում ենք աստուածային այցելութիւնների, մեր գլխին եկող փորձանքների ու վշտերի հանդէպ՝ ասելով. «Որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս»: Երբ յանկարծակի մի անսպասելի դէպք է տեղի ունենում մեր կեանքում, եւ մենք չգիտենք, թէ բարիք է բերելու նա մեզ, թէ չարիք, մենք սարսափահար բացականչում ենք. «Որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս»: Երբ մեր առաջ դրւում է մի լուրջ

խնդիր, որ մենք անկարող ենք լուծել, երկիւղը սրտերումս բացակա-չում ենք. «Որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս»: Երբ փոթորիկ է բարձրանում եւ կարկուտը հարուածում մեր պատուհանները, կամ մահու հրեշտակն է բաղխում մեր դուռը, ահաբեկուած բացականչում ենք. «Որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս»:

Հաւատացեալ եղբայրնե՛ր եւ քոյրեր, կամենո՞ւմ էք իմանալ, թէ ինչ ողջոյններ են դոքա. լսեցէ՛ք: Մեր երկնաւոր Հօր ուղարկած ողջոյնն է, որ անչափ սիրում է մեզ, մինչեւ իսկ երբ պատժում է. Նորա յաւիտենական սիրոյ ողջոյնն է, որ միայն մի՛ նպատակ ունի՝ օրհնել մեզ:

«Մի՛ երկնչիր, Մարիա՛մ, զի գտեր շնորհս յԱստուծոյ»,- այսպէս հանգստացրեց ու մխիթարեց հրեշտակը սարսափահար Կոյսին: Այս մխիթարանքը նաեւ քեզ է վերաբերում, իմ սիրելի՛ ժողովուրդ. մի՛ վա-խենար, որքան էլ Տիրոջ աջը ճնշէ քեզ, ինչ որ էլ գալիս է, Տիրոջից է գալիս քեզ՝ դէպի Տէրը առաջնորդելու համար: «Մի՛ երկնչիր, զի գտեր շնորհս յԱստուծոյ». այո՛, շնորհք է, երբ այցելում է քեզ Տէրը Իր օրհնու-թեամբ. նաեւ շնորհք է, երբ այցելում է քեզ եւ պատժում. եւ այդ բոլոր շնորհները ներփակուած են մի անուան մէջ՝ «Յիսուս» անուան մէջ, որ աւետեց հրեշտակը Մարիամին ի մխիթարութիւն: Տիրոջ աւետաբերնե-րը նաեւ քեզ են բերում այդ անուան աւետիքը, որպէսզի քեզ դէպի Նա առաջնորդեն, որ ընդունես Նրան, հաւատաս ու սիրես, որ ամէն վիշտ մեղմում է, ամէն սիրտ հանգստացնում եւ մարդուն երջանիկ դարձնում: Եւ այն ժամանակ այլեւս Տիրոջ այցելութիւնները քեզ չեն սարսափեցնի, այլ ինքդ քեզ կը յուսադրես՝ ասելով. «Մի՛ երկնչիր, զի գտեր շնորհս յԱստուծոյ», եւ կը փառաբանես Աստծուն:

«Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ»,- զարմացած պա-տասխանում է Կոյսը, երբ լսում է, որ աշխարհի Փրկչի մայր պիտի լինի:

«Զիա՞րդ լինիցի ինձ այդ»,- հարցնում ենք նաեւ մենք, երբ մարդ-կային միտքը ի վիճակի չէ լուծելու կեանքի առաջադրած հանգոյցները: «Զիա՞րդ լինիցի ինձ այդ»,- հարցնում ենք մենք, երբ աշխարհում տեղի ունեցող երեւոյթները չեն համապատասխանում Աստուծոյ թագաւորու-թեան եւ նորա թագաւորի արուած խոստումներին, որ հրեշտակի բեր-նով աւետուած է եւ գրի առնուած Աւետարանում. «Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր Նորա, եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեանս, եւ թագաւորութեան Նորա վախճան մի՛ լիցի»:

«Զիա՞րդ լինիցի ինձ այդ» ենք բացականչում, երբ դիտում ենք մեր անձնական կեանքի ընթացքը եւ չենք ըմբռնում նորա նպատակն ու վախճանը, երբ մտաբերում ենք Տիրոջ պահանջները մեզնից եւ տեսնում մեր մարդկային անկարողութիւնը: Սակայն չպիտի մոռանանք եւ այն, որ մեր ոյժը չէ այս բոլորը ի կատար ածողը, այլ Նորա, որ զօրաւոր է. «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի

վերայ քոյ»: Մի՞թէ հրեշտակի խօսքը ցայսօր չէ իրականացած, թէ Տիրոջ համար անկարելի բան չկայ: Մի՞թէ հրեշտակի աւետած անհաւատալի երեւոյթները իրականութիւն չդարձան: Մի՞թէ չեկաւ Նա, որ Բարձրելոյ Որդի պիտի կոչուէր: Մի՞թէ չհիմնուեցաւ Նորա թագաւորութիւնը, որ վախճան չպիտի ունենար: Եւ մի՞թէ Յիսուս չքարոզուեցաւ ամենուրեք եւ պաշտամունքի առարկայ չդարձաւ բոլոր ազգերի համար: Եւ մի՞թէ այս բոլորը ապացոյց չեն, որ Տիրոջ խորհուրդները անիմանալի են, բայց փառաւոր վախճան են ունենում:

Տիրոջ պատգամաբերները այսօր էլ այցելում են մեզ, սակայն որոնում են հեզ ու խոնարհ սրտեր, ինչպէս էր Կոյս Մարիամի սիրտը: Ուստի չեկան նոքա Երուսաղէմ՝ թագաւորանիստ հպարտ քաղաքը, այլ արհամարհուած Նազարեթը: Զբաղխեցին հարստի հոյակապ պալատի, այլ աղքատի խարխուլ խրճիթի դուռ: Զորոնեցին Եւայի դուստրների մէջ փայլուն եւ հանճարեղ հոգի, այլ Աստուծոյ հեզ եւ խոնարհ աղախին, աշխարհին անծանօթ եւ նորա աչքից ծածկուած, ինչպէս ապրիլի ամօթխած մանիշակ, որ մացառապատի ետեւում գլխիկոր ծաղկում է եւ անոյշ բոյր արձակում:

Տիրոջ աւետաբերները այսօր էլ հեզ ու խոնարհ հոգիներ են որոնում. սնափառութեան եւ աշխարհի ունայնութեան վայրերը չեն, որ այցելում է Փրկիչը եւ բերում Իր շնորհները, այլ պարզ կաւէ ամանի մէջ է, որ սիրով տնկում է Իր շնորհի երկնային ծաղիկը:

Հաւատացեալ եղբայրնե՛ր եւ քոյրեր, ով ուրեմն մշտապէս կամենում է Աստուծոյ օրհնութիւնը ընդունել, Նորա շնորհը ճաշակել, Նրան հաճելի լինել, լինի նա թագաւորական պալատում թէ աղքատիկ խրճիթում, կրէ իր գլխին իշխանական ականազարդ թագ, թէ աղախնի պարզ ու անպաճոյճ գլխադիր, երբեք չմոռանայ, որ Աստուած բաշխում է Իր շնորհները միայն համեստ ու խոնարհ սրտերի եւ նոցա մօտ ուղարկում Իր աւետաբերներին:

Երբ նկարիչները նկարում են Ս. Կոյս Մարիամին հրեշտակի այցելութեան եւ ողջոյնի ժամին, նոքա յաճախ նկարում են Կոյսին ծունր իջած աղօթքի դրակալի առաջ, վերան դրուած Ս. Գիրքը եւ կողքին՝ կաւէ ամանի մէջ՝ ծաղկող սպիտակ մանիշակը: Մանիշակը նորա անմեղութեան ու սրբութեան նշանակն է, Ս. Գիրքը այն աղբիւրն է, որով սնւում է անմեղութիւնը եւ աճում Աստուծոյ երկիւղը նորա սրտում: Երանի թէ մեր բնակարաններումն էլ աճէին անմեղութեան անուշաբոյր մանիշակներ, մեր սեղանների վերայ էլ բաց դրուած լինէր Ս. Գիրք՝ ղեկավար մեր խոհերի եւ առաջնորդ մեր վարք ու բարքի: Այն ժամանակ Տէրը հաճութեամբ կը դիտէր նաեւ մեր բնակարանները եւ Իր շնորհաբաշխ պատգամաբերներին կ՚ուղարկէր նաեւ մեզ մօտ:

Աւա՜ղ, ո՜րքան տներ կան մեզ մօտ այսօր ամենուրեք, ուր Տիրոջ աւե-

տաբերները խուսափում են մտնել, որովհետեւ այնտեղ անմեղութեան մանիշակի բոյրի փոխարէն՝ բացուած են մոլորութեան աղբիւր գրքեր, Տիրոջ երկիւղած աղախնի փոխարէն՝ աշխարհասէր տիկիններ ու աղջիկներ՝ մեծամտութեան եւ մեղքերի գերի ու ստրուկ դարձած: Երջանիկ է այն տունը, ուր անմեղութիւնն է ծաղկում եւ Աստուծոյ երկիւղը թագաւորում, ուր գալիս են Տիրոջ աւետաբերները՝ բերելով խաղաղութիւն եւ երջանկութիւն. եւ եթէ պատահում է, որ գուժաբեր մէկն է բաղխում դուռը, չպէտք է լքուել եւ յուսահատուել, որովհետեւ մաքուր խիղճը հանգիստ բարձ է մարդու համար: Ինչպէս Ս. Կոյսի անմեղութիւնն ու սրբութիւնը պահապան եւ մխիթարիչ էին ծանր րոպէներին, որ նա ունեցաւ հրեշտակի աւետման օրից մինչեւ իր Որդու խաչ ելնելը, երբ սուր ցցուեց նորա սիրտը, այսպէս նաեւ մենք ձգտենք ունենալ մաքուր խիղճ, որ առաքեալի հետ իրաւունք ունենանք ասելու. «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ» (Հռոմ. Ը 31) եւ ապրենք աշխարհում արդար ու երջանիկ:

«Ահաւասիկ կամ աղախին Տեառն. եղիցի ինձ ըստ բանի քում». Ս. Կոյսի խօսքի վերջաբանն է. անօրինակ հեզութիւն, անսահման խոնարհութիւն եւ Աստուծոյ կամքին բացարձակ հպատակութիւն է արտայայտում նորա խօսքի վերջաբանը: Երանի թէ նաեւ մեր խօսքերի վերջաբանը լինէր այն Տիրոջ այցելութեան ժամին եւ մեր ժամանակաւոր կեանքի ընթացքում, որ մենք ընդունակ լինէինք ասելու. հրամայի՛ր, պատրաստ եմ կատարելու. խօսի՛ր, պատրաստ եմ լսելու. առաջնորդի՛ր, պատրաստ եմ հետեւելու. որպէսզի մենք էլ, Ս. Կոյսի նման, աշխարհում ազնիւ, արդար եւ յաղթական ապրէինք եւ ասել կարողանայինք. «Եթէ Տէր ընդ իս է, ո՞վ կայ մեզ հակառակ»:

Այսօր Ս. Կոյս Մարիամի տօնն է, մի հերոս կնոջ տօն, հա՛յ կանայք եւ աղջկունք, դուք ամէնի՛ց առաջ իրաւունք ունիք հպարտանալու այդ կրօնական մեծութեամբ: Հայ կինը մեր պատմական կեանքի ընթացքում մեծ դեր է խաղացել թէ՛ ընտանեկան դաստիարակչական, թէ՛ տնտեսական եւ թէ՛ նոյնիսկ եկեղեցական կեանքում շնորհիւ իր հոգեկան մեծ առաքինութիւնների, որոնց հիմքը միշտ էլ քրիստոնէական ճշմարիտ հաւատն է եղել: Այսօր, որ հայ ընտանիքը կազմալուծւում է եւ հայ կեանքը գաղափարականութիւնից հեռանում, պատճառը կրօնական ոգեւորութեան թուլացումն է: Կրօնական ոգեւորութեան դրօշակակիրը բոլոր ազգերի պատմութեան մէջ եղել է կինը: Եկէ՛ք ուրեմն, հա՛յ քոյրեր, Ս. Աւետման հանդիսաւոր տօնի օրը չոքեցէ՛ք Տիրամօր առաջ, աղօթեցէ՛ք համեստութեամբ, հեզութեամբ, սրբութեամբ եւ հաւատի կատարելատիպ Ս. Կոյսի առաջ, որ նա ձեր աղերսն ու պաղատանքը մատուցանէ իր Որդուն՝ մեր Փրկչին, որպէսզի Նա մեր հոգու հպարտութիւնը եւ չափազանց ինքնավստահութիւնը եւ սոցա ծնունդ փոքրոգութիւնն ու

թերահաւատութիւնը ի բաց խլէ մեր սրտից եւ ներշնչէ մեզ մի նոր հոգի՝ հոգի հեզութեան եւ կենդանի հաւատոյ, որ կարողանանք մեր կեանքի կազմալուծման առաջն առնել եւ Տիրամօր նման պատասխանել Տիրոջը. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում». ամէն:

Խօսուած է Մ. Տաճարում
1935 թ. 7 ապրիլի
ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 61, թ. 1-7, ձեռագիր, բնագիր:

4

ՅԻՍՈՒՍ ՅԱԿՈԲԻ ՋՐՀՈՐԻ ՄՕՏ
(Յովհ. Դ 5-14)

Երեմիա մարգարէի բերնով Տէրը բողոքում է Իսրայէլի դէմ՝ ասելով. «Երկու չարիք գործեց Իմ ժողովուրդը. թողեց Ինձ, որ կենդանի ջրի աղբիւր եմ, եւ այս ու այն տեղ հորեր փորեց, որոնք ծակոտկէն են եւ ջուր չեն պահում» (Երեմ. Բ 13): Այսպէս է բողոքում Հին Ուխտի կենդանի Աստուածը Երեմիա մարգարէի բերնով: Այսօր էլ տեղին է նոյն բողոքը. որքա՜ն շատ են նաեւ այսօր Նոր Ուխտի ժողովրդի մէջ այնպիսիները, որոնց երեսովը տալ կարող է Աստուած՝ ասելով. «Թողեցին Ինձ եւ հեռացան, որ կենդանի ջրի աղբիւր եմ»: Կենդանի ջրի աղբիւր, որ միայն կարող է ճշմարտապէս մարդու ծարաւը յագեցնել եւ զօրացնել, մաքրել ու սրբել նրան: Մեծամտութեամբ երես են շրջում աստուածային խօսքի կենսատու աղբիւրից՝ կազդուրման տեղ եւ մխիթարութիւն որոնելով ինքնափոր հորերի մէջ: Ոմանք իրենց կուժերը մարդկային իմաստութեան աղբիւրի ջրով են լեցնել կամենում, ուսկից հոսում է սակայն ծարաւեցուցիչ եւ պղտոր ջուր՝ փոխանակ կազդուրիչ ու զովարար ջրի: Ուրիշները ծարաւը յագեցնել են կամենում աշխարհային հաճոյքների ցամքած աղբիւրներից, որոնց վերջին կաթիլները կիզիչ արեւի ազդեցութեան ներքոյ գոլորշիանում եւ անէանում են՝ թողնելով, որ ծարաւի հոգիները պապակեն: Այլք իրենց բերանը մօտեցնում են հեշտասէր ցանկութիւնների տղմոտ ճահճուտներին եւ իրենց հոգին սպանող թոյն կլանում:

«Իմ ժողովուրդը երկու յանցանք է գործում. թողնում է Ինձ, որ կենդանի ջրի աղբիւր եմ եւ այս ու այն տեղ նոր հորեր փորում, որոնք ծակոտկէն են եւ ջուր չեն պահում»: Այո՛, մինչեւ այսօր էլ այսպէս բողոքում է յաւիտենական Սէրը՝ մեր Փրկիչը, հազարաւոր մոլորուած ու ծարաւի հոգիների դէմ: Սակայն եւ այնպէս, կենդանի ջրի աղբիւրը հոսում է անդադար. ո՛չ ձմրան սառնամանիքներն են նրան սառցնում, ո՛չ ամրան

չոգերը ցամքեցնում եւ ո՛չ մարդկանց ձեռքերը խցանում. նա մշտահոս է, հոսում է նաեւ այսօր եւ այստեղ՝ ծնունդ տալով աստուածային շնորհի եւ ճշմարտութեան նորանոր անարատ աղբիւրների՝ հրաւիրելով մեզ մեր ծարաւը յագեցնելու. «Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» (Մատթ. Ե 6): Ո՛չ միան ծարաւի հոգիներն են, որ պիտի յագենան այս աղբիւրի ջրով, այլեւ նոքա, որոնք ծարաւի չեն, որոնց մէջ սակայն ծարաւ պիտի յուզէ նա: Ո՛չ միայն նոքա պիտի յագենան, որոնք կամովին գալիս են փրկութեան աղբիւրի մօտ, այլեւ նոքա, որոնք մեծամտութեամբ անցնում են նրա մօտով՝ չտեսնել ձեւանալով նրան, եւ կամ չափազանց հեռու են նրանից. յաւիտենական Սէրը նաեւ նոցա պիտի հրաւիրէ Իր մօտ՝ ասելով. «Եկա՛յք առ Իս, ամենայն վաստակեա՛լք եւ բեռնաւորք, եւ Ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28):

***

Յիսուս Յակոբի ջրհորի մօտ. այս պատմութիւնը աննման դասեր է տալիս մեզ:

Ա) Յիսուս ամենուրեք Տիրոջ համար հոգիներ է շահում. տեղ չկայ, որ Նա անպատեհ համարէ ուսուցանել: Յիսուս Երուսաղէմից գնում էր Գալիլեա. անցնում է Սամարիայով եւ հասնում Սիւքեմ. տապից ու ճամբորդութիւնից յոգնած՝ նստում է Նա Յակոբի աղբիւրի մօտ՝ հանգիստ առնելու: Ո՛վ կարող էր երբեւիցէ մտածել, որ աղբիւրի քարէ շուրթերը՝ ջրի եկող կանանց թեթեւսոլիկ խօսակցութեան վայրը, դառնար խոստովանութեան եւ քարոզի աթոռ: Ո՛վ կարող էր երեւակայել, որ դաշտի ծառերը, որոնց շուքին նստում էին յոգնած ճամբորդները, իրենց ճիւղերը մատրաձեւ պիտի կամարէին, որպէսզի հնչէր այնտեղ Տիրոջ կենդանարար խօսքը:

Նոյն Յովհաննէս աւետարանիչը նախընթաց գլխի մէջ պատկերացնում է Փրկչին, որ խօսում է Նիկոդեմոսի հետ՝ նրա հոգին շահելու նպատակով:

Հաւատացեալ եղբայրնե՛ր եւ քոյրեր, Յիսուս ձգտում է ամենուրեք հոգիներ շահել. երէկ՝ սենեակի մէջ, այսօր՝ աղբիւրի մօտ, վաղը՝ ձկնորսական նաւակում, միւս օր՝ սարի գագաթին, հարսանեաց խնջոյքում, հիւանդի անկողնի մօտ եւ այսպէս անվերջ: Նա ամենուրեք, ուր ոտք է դնում, կանգնում է Իր քարոզչական ամբիոնը, սովորական վայրը սրբավայր դարձնում եւ Իր խօսքը՝ հոգեշահ քարոզ: Եւ այս անում էր շնորհիւ Իր ներքին օծման եւ Իր քահանայապետական զօրութեան: Նրա հոգին ու սիրտը դարձած էր միշտ դէպի Բարձրեալը, միաժամանակ նաեւ լի էր սիրով դէպի աղքատներն ու նուաստները, ուստի եւ ամենուրեք գտնում էր տաճար եւ Իր շուրջը՝ պատրաստի համայնք: Սովորե՛նք Նրանից Տիրոջ համար հոգիներ շահել:

Հոգիներ շահել Տիրոջ համար: Այս ո՛չ միայն Եկեղեցու եւ նրա պաշտօնէութեան կոչումն է, այլեւ իւրաքանչիւր հաւատացեալի, Յիսուսի իւրաքանչիւր ճշմարիտ աշակերտի: Այսօր էլ չպիտի մոռանալ, որ էականը տեղը չէ, ձեւը չէ, այլ ճշմարիտ քահանայապետական հոգին՝ ճշմարտութեան եւ սիրոյ հոգին: Փա՜ռք այն տաճարին, ուր դարերից ի վեր բարեպաշտ համայնքներ են ի մի խմբուել, եւ նոցա ջերմեռանդ հոգիները՝ դէպի երկինք սլացել: Փա՜ռք այն տաճարի բեմին, ուսկից ի հնուց անտի հաւատարիմ պաշտօնեայի աւետարանական ձայնն է հնչել: Փա՜ռք այն Սուրբ Սեղանին, որի օծեալ սիւների առաջ փրկութեան ծարաւի բազմաթիւ հոգիներ Փրկչին մօտեցել են՝ ճաշակելով օրհնեալ Հացն ու Գինին: Փա՜ռք Աստուծոյ տան սուրբ կարգերին, որոնք նպաստում են համայնքի հաւատոյ զօրացման, Տիրոջ համար նոր հոգիներ շահում եւ կամ հների կապը Աստուծոյ եւ միմեանց հետ առաւել եւս ամրապնդում: Փառք եւ պատի՛ւ եկեղեցական բոլոր ձեւերին ու կանոններին. սակայն չպիտի մոռանալ, որ էականը ո՛չ տեղն է եւ ո՛չ ձեւը, այլ հոգին՝ ճշմարտութեան եւ սիրոյ հոգին:

Աստուծոյ տան բոլոր բեմերն ու սեղանները, մկրտարաններն ու խոստովանարանները, կարգերն ու կանոնները՝ նոքա բոլորը փայտ ու քար են եւ կը մնան այնպիսիներ, եթէ սիրոյ հոգին պակասում է մեզ՝ Աւետարանի քարոզիչներիս եւ հովիւներիս, որ նպատակ ունինք շահելու ձեզ Տիրոջ համար, իսկ ձեզ՝ ունկնդիրներիդ՝ զղջման հոգին, որ ստիպում է որոնել Տիրոջը: Ուստի եւ մեզ համար էականը քահանայապետական հոգի ունենալն է Յակոբի աղբիւրի մօտ նստած հոգիների մեծ Հովուի նման:

Քահանայապետական հոգի ունենալ ոչ միայն տաճարի բեմից Աստուծոյ խօսքը քարոզելու, ոչ միայն այնտեղ աստուածային շնորհները բաշխելու, այլ առաւելապէս սիրոյ գործերով կենդանի օրինակ հանդիսանալու՝ Տիրոջ համար հոգիներ շահելու նպատակով:

Քահանայապետական հոգի ունենալ ոչ միայն սրբավայրերում եկեղեցական զգեստը կրելիս եւ Աւետարանը քարոզելիս, այլեւ առօրեայ կեանքում մարդկանց ողջունելիս, սեղանի շուրջը խօսակցելիս, զբօսանքների ժամանակ կատակելիս, ամենուրեք պէտք է ունենալ խօսքի եւ հայեացքի վեհութիւն՝ անպատկառներին սանձելու, սիրալիրութիւն՝ բարիներին գրաւելու եւ սրբութիւն՝ ամէնքին դէպի Աստուած առաջնորդելու համար:

***

Բ) Յիսուսի համար անպատեհ ժամանակ չկայ հոգիներ շահելու նկատմամբ: Յիսուս, տապից ու երկար ճամբորդութիւնից յոգնած,

նստաւ Յակոբի ջրհորի մօտ՝ հանգիստ առնելու: Նա մենակ էր. աշակերտները քաղաք էին գնացել հաց գնելու: Ժամը 12-ն էր, երբ տաք արեւելքում ամէն ինչ խաղաղ է, ամէն ինչ նիրհում է. ոչ մի տերեւ ծառերի վերայ չի ճօճւում, ոչ մի թռչուն իր բնում չի ճռուողում, քամին չի շնչում եւ դաշտի հացաբոյսերը չի շարժում: Կիսօրեայ կիզիչ արեւն է իշխում բնութեան վերայ. աշխարհն ու բնութիւնը նիրհում են: Միայն մէկն է արթուն, որ դէպի մարդն ունեցած անհուն սիրով տարուած՝ հետամուտ է կորսուածներին գտնելու: Միայն մէկն է արթուն, որի եռանդը հանգիստ չգիտէ եւ անդուլ աշխատում է: Նրա համար անպատեհ ժամ չկար. Նա օգտագործում էր ամէն ժամ հոգիներ շահելու համար՝ ծառայելով Աստծուն եւ մարդկութեան: Կէսգիշերին արթուն է՝ Նիկոդեմոսին ուսուցանելու, կէսօրին արթուն է՝ սամարացի կնոջ հոգին շահելու, կանուխ արշալոյսին յայտնւում է Տիբերիա ծովակի մօտ Իր աշակերտներին, ուշ երեկոյեան երեւում է նոցա մէջ Իր խաղաղութեան ողջունով: Նա գիշեր-ցերեկ անդուլ աշխատում է, անգամ մահուան ժամին՝ խաչի վերայ, փորձում է մի կորած հոգի փրկել եւ միայն երբ հոգին է տալիս, բացականչում է. «Ամենայն ինչ կատարեալ է» (Յովհ. ԺԹ 30):

Երնե՜կ թէ մենք էլ պատրաստ լինէինք Փրկչի նման ծառայելու մեր եղբօրը: Երնե՜կ թէ մենք էլ մեր Տիրոջ նման մեր սրտի մէջ մշտաբորբոք սէր ունենայինք հանդէպ մեր եղբօրը: Երնե՜կ թէ մենք էլ Փրկչի նման մինչեւ մեր հոգին տալը ընդունակ լինէինք ի բարին օգտագործելու մեր ժամանակն ու մեր աստուածապարգեւ հոգեւոր դանձերը: Երնե՜կ թէ մենք էլ ծարաւի հոգի ունենայինք եւ Նիկոդեմոսի նման Փրկչին որոնէինք:

Կէսօր էր. ժամը 12-ն էր, երբ Յիսուս հանգստանում էր Յակոբի ջրհորի մօտ: Հաւատացեալ եղբայրնե՜ր եւ քոյրեր, գուցէ եւ ձեր մէջ կան այնպիսիները, որոնց երիտասարդութեան ոսկէ առաւօտը անցել է անօգուտ, երբ նոցա կեանքի արեւը հասել է իր բարձրագոյն կէտին եւ թեքման շրջանն է մտնելու. թո՜ղ մտաբերեն նոքա, որ բարձրագոյն ժամն է Տիրոջը որոնելու: Գուցէ կան ձեր մէջ նաեւ այնպիսիները, որոնց կէսօրն էլ անցել է, եւ օրը երեկոյանալու վերայ է, եւ դեռ նոքա հեռու են Տիրոջից. թո՜ղ նոքա եւս յիշեն, որ Տէրը պատրաստ է ամէն ժամ սիրով ընդունելու նոցա եւ խաղաղութիւն պարգեւելու նոցա հոգուն:

***

Գ) Կարիք չկայ, որ չհոգայ Յիսուս. «Եթէ գիտենայիր, թէ ով է քեզնից ջուր խնդրողը, դո՜ւ կը խնդրէիր Նրան, եւ Նա կուտար քեզ կենդանի ջուր»: Փրկիչը անցնում է Իր բուն նպատակին. Նա սովորական խօսակցութիւնը փոխում է Աւետարանի քարոզի: Ճամբորդական անցո-

ղակի ծանօթութիւն հաստատելը չէր Նրա նպատակը, այլ մի հոգի շահել յաւիտենական կեանքի համար: Մարդու նիւթական ծարաւի յագեցումը չէր Նրա նպատակը, այլ յուզել նրա մէջ ճշմարտութեան ծարաւ. «Եթէ գիտենայիր, թէ ով է քեզնից ջուր խնդրողը, դո՛ւ կը խնդրէիր Նրան, եւ Նա կուտար քեզ կենդանի ջուր»: Յիսուսի առաջարկած ջուրը սամարացի կնոջ ըմբռնողութիւնից բարձր էր, ինչպէս ցոյց է տալիս նրա պատասխանը: Սամարացի կնոջ նման այսօր էլ մարդկութիւնը չի ըմբռնում Յիսուսին. նիւթապաշտութիւնը կուրացրել է նրան. մարդ այսօր նիւթականից դուրս ոչինչ գիտնալ չ՛ուզէ. նա եկեղեցի է բերում իր նիւթապաշտական խոհերը, նա իր մարմնական հաճոյասէր խոհերը խառնում է Աստուծոյ խօսքին, ուստի եւ ամէն ինչ այնտեղ անօգուտ է անցնում: Սամարացի կինը վստահութիւն էլ չունի Տիրոջ վերայ. «Մի՞թէ Դու աւելի մեծ ես, քան մեր Յակոբ նահապետը»: Այսպէս է խօսում նաեւ այսօր մեր մէջ անհաւատութիւնը, նա ամէն ինչ չափում է իր կանգունով, նա չի կարողանում իր մտաւոր տեսութեամբ բարձրանալ երկրային հորիզոնից եւ սամարացի կնոջ նման չի էլ կամենում ունենալ բարձրագոյն պահանջներ: Յակոբի ջրհորը բաւ էր նրան, որտեղից խմել էին իր նախահայր Յակոբը, նրա որդիները եւ անասունները:

Ո՛վ դու, բարի՛ կին, քո վերջին խօսքը մատնում է քեզ ամբողջովին. մի՞թէ դու աւելի բարձր պահանջ չունիս, քան Յակոբի անասունները, եւ դու քեզ Աբրահամի դուստր ես համարում: Մի՞թէ աւելի բարձր խոհեր չունիս, դու, որ անմահ հոգի ես: «Չէ՞ որ Յակոբը իր զաւակներով եւ անասուններով խմել է այնտեղից». այո՛, այսպէս է խորհում այսօր էլ մարդու նիւթապաշտ միտքը, որ այլ կարիք չի ճանաչում, բայց եթէ օրէօր ապրել պապենական սովորութիւններով եւ կուշտ խմել ու յագենալ երկրային անցական հաճոյքների ճահճային ջրերով, ինչպէս վարուել են հազարաւորները մեզնից առաջ եւ այժմ մեր շուրջը, անասունների նման, որոնք ցերեկը ծանր լուծ են կրում, երեկոյեան կուշտ խմում եւ ապա յարդի կապւում: Այսպէս եւ մենք ցերեկը վազում ենք մեր պաշտօնատեղին, գիշերը՝ գինետուն կամ մի այլ զուարճատեղի եւ ապա վազում յարդի եւ յետոյ անկողին մտնում առանց Աստուծոյ, մինչեւ լրանայ մեր կեանքի շրջանը եւ յաւիտեան անցնենք գնանք առանց Աստուծոյ, առանց հաւատոյ եւ յուսոյ: Մի՞թէ այս չէ այսօր հազարաւորների կեանքի պատկերն ու ընթացքը:

Խե՜ղճ հոգի. լա՞ւ ես զգում քեզ. մի՞թէ այս ծակոտկէն ջրհորը իր անցական երկրային հաճոյքներով կարող է մարել հոգուդ ծարաւը եւ բաւարարել նրա բարձր թռիչքներին ու կարիքներին: Լսեցէ՛ք Յիսուսի խօսքը՝ Յակոբի ջրհորի մօտ արտասանած. «Ով այս ջրից ըմպէ, կրկին կը ծարաւի...»: Այո՛, ով աշխարհային հաճոյքների աղբիւրից խմէ, կրկին կը ծարաւի: Մի՞թէ ուղիղ չէ, խոստովանի՛ր դու, ի՛մ հոգի. քո բոլոր երկրա-

յին ուրախութիւնները՝ ընկերութիւններ, խնջոյքներ, պարահանդէսներ, թատրոն, կինո, ռոմաններ, նորաձեւ զգեստներ, ճամբորդութիւններ, հարստութիւն, սեփականութիւն, դրամ եւ այն բոլորը, որ դու բարիք ես համարում, երբեւիցէ յագեցրե՞լ են քո ծարաւը, որ դու քեզ կատարելապէս գոհացած զգայիր: Իհա՛րկէ ոչ. եւ ով միայն այդ ջրերից խմէ, կրկին կը ծարաւի: «Բայց ով ըմպէ այն ջուրը, որ Ես եմ տալու,- ասում է Տէրը,- երբեք չի ծարաւի», որ նշանակում է՝ նա այլեւս որոնումների ետեւից չի լինի, հոգեպէս կը գոհանայ, նրա հոգեւոր կեանքը չի ցամաքի, այլ կը դառնայ երջանկութեան մնայուն կենդանի աղբիւր: Մի՞թէ ճշմարիտ չեն Յիսուսի խօսքերը, եւ մի՞թէ չկան ձեր մէջ մարդիկ, որոնք ունեցել են այս ապրումը եւ կը կարողանան վկայել նրա ճշմարտութիւնը:

Յիսուսի խօսքերը յուզեցին սամարացի կնոջ սիրտը եւ ստիպեցին բացականչել. «Տէ՛ր, տո՛ւր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից»: Թո՛ղ այս պատմութիւնը յուզէ նաեւ ձեր սիրտը՝ աշակերտելու Յիսուսին, ուսանելու Նրա կենսատու վարդապետութիւնը, միշտ այցելութեան գալու կենդանի աղբիւրին՝ աստուածային խօսքի կենդանարար ճշմարտութիւնները լսելու՝ ձեր հոգու խաղաղութեան եւ ձեր կեանքի երջանկութեան համար: Եկէ՛ք միշտ այս տաճարը՝ ձեր միակ հաւատարիմ ու ճշմարիտ Բարեկամին՝ Փրկչին այցելելու, որ միշտ եւ ամենուրեք որոնում է ձեզ՝ ձեր հոգու ծարաւը մարելու նպատակով:

Շնորհք եւ ողորմութիւն...

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 80, թ. 1-9, ձեռագիր, բնագիր: